

Հ. Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԶՄԸ ԵՎ ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքացիների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությունը միշտ էլ հանդիսացել է կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության հոգատարության առարկան։ Սոցիալիզմի լրիվ և վերջնական հաղթանակը նոր պայմաններ ստեղծեց սովետական քաղաքացու ազատությունների և իրավունքների հետագա ընդլայնման համար։ Տնտեսության սոցիալիստական սիստեմը և սոցիալիստական սեփականության անբաժան տիրապետությունը, մարդու կողմից մարդու շահագործման վերացումը, արտադրողական ուժերի անշեղ զարգացումը նյութական պայմաններ ստեղծեցին անձի համակողմանի զարգացման, նյութական և կուլտուրական բարեկեցիկ կյանքի զարգացման համար։

Բուրժուական կարգերում, վարձու ստրկության պայմաններում աշխատավոր մարդիկ իրանքն ազատություն և երաշխավորված իրավունքներ ունենալ չեն կարող։ Թեև բուրժուազիան ճեղքված էր հոգևոր և ֆիզիկական հարկերի միջև, բայց կյանքում չի ապահովում դրանց իրականացումը։ Օրինակ, ԱՄՆ-ի օրենսդրության համաձայն տուժողը կարող է ակտիվ մասնակցություն ունենալ քրեական հետապնդում սկսելուն և դատարանում մեղադրանքը պաշտպանելուն, բայց դրա համար պահանջում են նյութական միջոցներ, որոնցից զուրկ լինելով աշխատավորը չի կարող իր ձեռքով իրավունքը իրականացնել։

Միմիայն սոցիալիստական կարգերն են աշխատավորների ազատության, իրավունքների և օրինական շահերի պաշտպանության համար ռեալ պայմաններ ստեղծում։

Այս տեսակետից կարևոր դեր խաղացին ՍՄԿՊ XX, XXI, և XXII համագումարները, որոնք սովետական դեմոկրատիայի զարգացման նոր էտապի սկիզբը հանդիսացան։ Համագումարների որոշումները լայն հնարավորություններ ստեղծեցին պետական ապարատի հետագա դեմոկրատացման, երկրի կառավարման գործում մասնակցության ներգրավման համար։ Ստեղծվեցին հասարակական կարգի պահպանման կամավոր ժողովրդական որոժինաներ, թաղային կոմիտեներ, ընկերական դատարաններ և այլ կազմակերպություններ, որոնք իրենց գործունեության ընթացքում, հենվելով հասարակական ուժի վրա և համագործակցելով դատաբանական օրգանների հետ, ակտիվ պայքար են ծավալել սոցիալիստական օրինականության ամրապնդման, քաղաքացու իրավունքների և շահերի պաշտպանության համար։

1958 թ. դեկտեմբերի 25-ին ՍՍՌՄ Գերագույն սովետի 5-րդ սեսիայի կողմից ընդունված ՍՍՌ Միության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքները սուժողին նանաչեցին որպես քրեական դատավարության սուբյեկտ։ Մինչ այդ տուժողը իր պրոցեսուալ վիճակով հավասարեցված էր վկային, բացառությամբ մասնավոր մեղադրանքի գործերից։

Հարցի նոր լուծումը հանցագործությունից տուժած անձի իրավունքների պաշտպանության համար ստեղծում է լավագույն երաշխիք, բարձրացնում աշխատավորության ակտիվությունը օրինականության պահպանության համար մղվող պայքարում և տուժողին տալիս է պրոցեսուալ լայն հնարավորություն՝ իր իրավունքները և օրինական շահերը պաշտպանելու համար։

Այն հանգամանքը, որ մասնավոր-հանրային և հանրային մեղադրանքի գործերով տուժողը իր իրավական վիճակով անցյալում հավասարեցված էր վկային, տեսարանների կողմից բացատրվել է շատ ընդհանուր և անհամոզիչ կերպով։ Նրանք գտնում էին, որ տուժողի շահերի պաշտպանությունը հանձնված է իշխանության օրգաններին, որոնք հանցագործության դեպքում պարտավոր են քրեական դործ հարուցել, կատարել քննություն, որի ընթացքում պաշտպանել նաև տուժողի շահերը։ Իրավաբանական դրականության մեջ նույնիսկ այն կարծիքն է հայտնվել, որ քրեական դատավարությունում ընդհանրապես անհրաժեշտություն չկա տուժողի իրավունք-

թական վնաս է պատճառվել, այլև այն դեպքերում, երբ անձին հանցագործությամբ ֆիզիկական կամ բարոյական վնաս է հասցվել:

Տարակարծություն կա այն հարցում, թե անձը, որի նկատմամբ կատարվել է հանցավոր ոտնձգություն և մեղադրյալի կամքից անկախ հանդամանքների բերումով այն չի հասցվել իր վախճանին, տուժող պետք է ճանաչել, թե՛ ոչ:

Այդ հարցերը առաջանում են, երբ քննության են առնվում այնպիսի հանցավոր արարքներ, ինչպիսիք են սպանության փորձը, ավազակային հարձակումը, բռնաբարությունը, զոդությունը և այլն: Սովետական պրոցեսուալիստները այդ հարցը լուծում են տարբեր կերպ: Այսպես, իրավաբանական դիտությունների դեկտոր Ռ. Ռախունովը և իրավաբանական դիտությունների թեկնածու Ա. Ռ. Ռատինովը գտնում են, որ նրան, ում շահերի դեմ հանցավոր ոտնձգություն է կատարվել, պետք է ճանաչել որպես տուժող⁶:

Այլ տեսակետի վրա է կանգնած Վ. Յա. Դորոխովը: Ըստ նրա, անձին տուժող ճանաչելու համար անհրաժեշտ է վնասի առկայություն⁷: Նախապատվություն տալով առաջին տեսակետին, մենք ելնում ենք այն բանից, որ սովետական քրեական իրավունքը պատասխանատվություն է սահմանում ոչ միայն հանցագործությամբ պատճառած վնասի, այլև այնպիսի գործողության համար, որն ուղղված է եղել հանցագործություն կատարելուն, սակայն, դեպքերի պատահական բերումով, մեղադրյալի կամքից անկախ պատճառներով այն չի հասցվել մինչև վերջ:

Առանձին դեպքերում հանցափորձը տուժողի համար մի շարք վտանգավոր հետևանքներ է առաջացնում. սպանության փորձի ժամանակ տուժողին կարող է պատճառվել ծանր կամ այլ վարմանական վնասվածք, զոդության փորձի դեպքում՝ զույթի վնասում, բռնաբարության փորձի դեպքում՝ բարոյական կամ ֆիզիկական վնաս: Հանցափորձը կարող է տուժողին պատճառել այս կամ այն վնասը, սակայն դրանից չի հետևում, որ փորձը բոլոր դեպքերում հաջորդում է վնաս պատճառելուն: Հայտնի են շատ դեպքեր, երբ հանցափորձի ժամանակ վնաս չի առաջանում, այդ մեծ մասամբ նկատվում է չավարտված, իսկ երբեմն էլ ավարտված հանցափորձի դեպքում:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ դեպքերում քննչական օրդանը, ինչպես նաև դատարանը, տուժող չեն ճանաչում այն անձին, որի շահերի դեմ հանցափորձ է կատարվել, սակայն, դեպքերի պատահական բերումով, վնասը տեղի չի ունեցել: Սրինակ, քաղաքացի Պ.-ն ՀՍՍՄ քրեական օրենսգրքի 15—112 հոդվածի 1-ին մասով դատի է տրվել այն բանի համար, որ 1962 թ. դեկտեմբերի 29-ին բռնաբարության փորձ է կատարել քաղաքացուհի Կ.-ի նկատմամբ. վերջինիս զանգատի հիման վրա հարուցվել է քրեական գործ: Քննության ընթացքում քաղ.-ուհի Կ.-ի և մեղադրյալի միջև հաշտություն կայանալու պատճառով, բնական օրգանը, խախտելով ՀՍՍՄ քրեական դատավարության օրենսգրքի 102 հոդվածի պահանջները, գործը վարույթում կարճել է: Հետագայում քաղ.-ուհի Կ.-ի զանգատի հիման վրա գործի քննությունը վերսկսվել և Պ.-ն դատապարտվել է: Ինչպես քննչական օրգանը, նույնը և դատարանի տնօրինական և դատական նիստը քաղ.-ուհի Կ.-ին տուժող չեն ճանաչել, նա պրոցեսում հարցաքննվել է որպես վկա, չնայած հանցագործությամբ նրան պատճառվել է բարոյական վնաս⁸:

Քրեական օրենսդրությունը պատժելի համարելով ինչպես հանցափորձը, այնպես էլ ավարտված հանցագործությունը, ելնում է այն բանից, որ հանցափորձը հավասարապես վտանգ է սպառնում ինչպես սոցիալիստական հասարակական հիմքերին, այնպես էլ սովետական քաղաքացիների իրավունքներին ու շահերին:

ՍՍՄ Միության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքները և միութենական հանրապետությունների քրեական դատավարության օրենսգրքերը տուժող չեն ճանաչում այն անձին, որի շահերը հանցափորձի հետևանքով դրվել է վտանգի տակ:

Անձի շահերը հանցափորձի հետևանքով վտանգի տակ դրվելու դեպքում ՀՀԿԿ-ն տեղի-վրդական Հանրապետության քրեական օրենսդրությունը միանգամայն ճիշտ կերպով նրան ճա-

⁶ Р. Д. Рахунов, Расширение прав потерпевшего в уголовном процессе, «Социалистическая законность», 1960 г., № 4, стр. 32. Д. Р. Ратин, Участие потерпевшего в предварительном следствии, «Социалистическая законность», 1959, № 4.

⁷ В. Я. Дорохов, Показания потерпевшего как доказательство в уголовном процессе, Москва, 1959, стр. 5.

⁸ Տե՛ս նրան քաղաքի Օրդենիկիձեի շրջանի ժողդատարանի արխիվ, գործ Մ 1—251, 1962 թ.:

նաշում է որպես տուժող: Առանձին դեպքերում մեր օրենսդրությամբ նույնպես այդ անձանց իրավունք է վերապահվում դորժով հանդես գալու որպես տուժող: Մենք նկատի ունենք բռնաբարությունը (ՀՍՍՌ քր. օր. 112 հոդ.): Այս հանցագործության դեպքում քրեական գործ է հարուցվում ոչ այլ կերպ, քան տուժողի զանգատի հիման վրա: Որն է կասկած չկա, որ նման զանգատ կարող են ներկայացնել ոչ միայն այն անձինք, որոնց բռնաբարել են, այլև նրանք, որոնց նկատմամբ կատարվել է բռնաբարության փորձ, սակայն մեղադրյալի կամքից անկախ պատճառներով բռնաբարության ակտ տեղի չի ունեցել:

Կարծում ենք, որ վերը շարադրվածը կարող է վերաբերվել նաև այն անձանց, որոնց իրավունքների դեմ կատարվել է հանցափորձ և նրանց նույնպես պետք է ճանաչել տուժող:

Բռնաբարության գործերով տուժողի պրոցեսուալ վիճակի յուրահատկությունը բնութագրվում է նրանով, որ չնայած այդ գործերը դասվում են հանրային-մասնավոր մեղադրանքի գործերի թվին, բայց հարուցվում են միայն տուժողի զանգատի առկայության դեպքերում: Ինչպես հայտնի է, քրեական գործի հարուցման նույն կարգը գոյություն ունի նաև բռնաբարության փորձի դեպքում և տուժողը պրոցեսում ձեռք է բերում նույնպիսի իրավունքներ, ինչպիսիք տրվում են բռնաբարության դեպքում:

Տուժողը քրեական դատավարությունում իր շահերը կարող է պաշտպանել անձամբ կամ ներկայացուցչի միջոցով: Դա նրա իրավունքն է, որը և տուժողի շահերի պաշտպանության լավագույն երաշխիք է համարվում:

Հայկական ՍՍՌ քրեական դատավարության օրենսգրքի 52 հոդվածը սահմանել է այն անձանց շրջանակը, որոնք կարող են ներկայացնել տուժողի օրինական շահերը: Դրանք թվում հատկապես նշվում են փաստաբանները, մերձավոր ազգականները, արհմիութենական և հասարակական այլ կազմակերպությունների ներկայացուցիչները, ինչպես նաև այլ անձնավորություններ՝ հետաքննություն կատարող անձի, քննիչի և դատարանի թույլտվությամբ:

Մասնավոր մեղադրանքի գործերով ներկայացուցչությունը կիրառելի չէ, քանի որ մեղադրյալի հետ հաշտվելու իրավունքը պատկանում է միայն տուժողին:

Քրեական դատավարության հիմունքների (հոդ. 24) բովանդակությունից հետևում է, որ տուժողը իրեն տրված պրոցեսուալ իրավունքները կարող է իրականացնել անձամբ կամ նրա կատարումը հանձնել ներկայացուցչին:

Պետք է նշել, սակայն, որ տուժողը ոչ բոլոր իրավունքների կատարումն է, որ կարող է հանձնել ներկայացուցչին: Օրինակ, ցուցմունք տալու իրավունքը պատկանում է անձամբ տուժողին, քանի որ նրա ցուցմունքը գործող օրենսդրության համաձայն համարվում է ապացույցի սղբյուր և ցուցմունք տալը ոչ միայն նրա իրավունքն է, այլև պարտականությունը:

ՍՍՌ Միության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքների ընդունումից հետո սովետական պրոցեսուալիստների մեջ քննության առարկա դարձավ տուժողի մահից հետո նրա իրավունքները հարազատներին տալու հարցը: Շատ գիտնականներ և պրակտիկ աշխատողներ դրական պատասխան տվեցին այդ հարցին, գտնելով, որ այն կատարված հանցագործության պատճառով մահացածի իրավունքը պետք է վերապահել նրա մերձավոր ազգականներին: Հակառակ դրան, որոշ գիտնականներ էլ գտնում են, որ հանգուցյալի ազգականները կարող են ճանաչվել տուժող միայն այն դեպքում, երբ նրանց պատճառվել է զուլբային կամ ֆիզիկական վնաս⁹: Մյուսները ենթադրում են, որ հանգուցյալի հարազատներին կարելի է թույլատրել պրոցեսում մասնակցելու, եթե նրանց պատճառվել է բարոյական վնաս¹⁰:

Հայտնի է, որ հանցագործության հետևանքով, երբ անձը մահացել է, անուղղակի բարոյական կամ նյութական վնաս է պատճառվում հանգուցյալի մի քանի հարազատներին: Այդ կասկածությունները, մի շարք դիտնականներ¹¹ առաջարկում են նման դեպքերում դատավարության մասնակցելու իրավունք տալ ոչ թե տուժողի բոլոր հարազատներին, այլ նրանց համաձայնու-

⁹ «Научно-практический комментарий к основам уголовного судопроизводства СССР и союзных республик», Госюриздат, 1961 г., стр. 159.

¹⁰ Я. С. Киселев, Участники процесса, их права и обязанности: Некоторые вопросы уголовно-процессуального законодательства РСФСР (УК и УПК 1960 г.). Доклады на научно-теоретической конференции комиссии адвокатов Ленинграда, 1961 г., стр. 23.

¹¹ М. Ю. Рогинский, Г. М. Минковский, Уголовно-процессуальный кодекс РСФСР, «Социалистическая законность», 1960, № 12, стр. 20.

թյամբ որևէ մեկին: Մեր կարծիքով, նման առաջարկությունը ճիշտ է, քանի որ այս դեպքում լիազորված հարազատը պրոցեսում կարող է ներկայացնել բոլորի շահերը:

Վե՞ր շարադրվածը համապատասխանում է ՀՍՍՌ քրեական դատավարության օրենսգրքի 48 հոդվածից բխող պահանջներին: Այդ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ տուժողի մոտիկ ազգականը կարող է հանդես գալ որպես տուժողի ներկայացուցիչ և օգտվել այն պրոցեսուալ իրավունքներից, ինչ իրավունք տրվում է տուժողին՝ իրեն շահերի պաշտպանության համար:

ՀՍՍՌ քրեական դատավարության օրենսգրքի 20-րդ հոդվածը մերձավոր ազգականների թվին դասում է՝ ծնողներին, երեխաներին, պապին, տատին, թոռներին, որդեգրվածներին, որդեգրողներին, հարազատ եղբայրներին, քույրերին, ամուսնուն և կնոջը:

Այդ հարցը նույն ձևով է կարգավորվում նաև Ղազախական, Կիրգիզական, Վրացական հանրապետությունների քրեական դատավարության օրենսգրքերում¹²:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ քննչական աշխատողներ բոլոր դեպքերում չէ, որ մտահոգվում են տուժողի մերձավոր ազգականներին գտնելու հարցով: Երբեմն մերձավոր ազգական են ճանաչում այնպիսի մարդու, որը ոչ մի ազգակցական կապ չունի հանգուցյալի հետ: Օրինակ, քաղաքացի Հ.-ի քրեական գործով, որը դատապարտվել է ՀՍՍՌ քր. օրենսգրքի 173 հոդվածի 2-րդ մասով, քննչական օրգանը տուժողի ներկայացուցիչ է ճանաչել հանգուցյալի հոր ընկերոջը՝ քաղ. Դ.-ին, որը ազգակցական ոչ մի կապ չունի հանգուցյալի հետ¹³: Դրան հակառակ քննչական օրգանը ճիշտ է վարվել, երբ հանգուցյալ Վ.-ի գործով ներկայացուցիչ է ճանաչել նրա կնոջը¹⁴:

Որպեսզի անձը համարվի քրեական պրոցեսի ակտիվ մասնակից, անհրաժեշտ է, որ իրավասու օրգանի կողմից որոշում կայացվի նրան տուժող ճանաչելու մասին:

Նախաքննության և հետաքննության օրգանների պրակտիկ աշխատանքի ընթացքում հանդիպում են դեպքեր, երբ քաղաքացուն տուժող ճանաչելու որոշում չի կայացվում և չի քննատրվում նրա իրավունքները: Մյուս դեպքերում՝ շնայած նրան, որ որոշմամբ անձը տուժող է ճանաչվում, բայց դա կատարվում է քննության ամենավերջին ստադիայում՝ անմիջապես մեղադրանք առաջադրվելու կամ նյութերի հետ ծանոթացնելու պահին: Այսպես, օրինակ, քաղաքացի Ե.-ի նկատմամբ 1963 թ. օգոստոսի 28-ին մեղադրանք է առաջադրվել Հայկական ՍՍՌ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածով, 1963 թ. սեպտեմբերի 27-ին քաղաքացի Գ.-ն ճանաչված է որպես տուժող, հենց նույն օրն էլ ավարտվել է գործի քննությունը¹⁵:

Նման պրակտիկան ճիշտ չէ, այն էպես սահմանափակում է տուժողի պրոցեսուալ հնարավորությունները, նրան իրավունք չի տալիս, որպեսզի լրիվ օգտագործի օրենքով իրեն վերապահված իրավունքները: Դրա համար էլ անձին տուժող ճանաչելը պետք է պրոցեսուալ կերպով ձևակերպվի, երբ պարզվի, թե ո՞ւմ է պատճառվել վնասը¹⁶:

Ինչպես նշվեց վերևում, ՍՍՌ Միության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքները (1958 թ.) տուժողին լայն հնարավորություններ են տալիս քրեական ամեն տեսակի գործերով ակտիվ կերպով մասնակցելու գործի քննության բոլոր փուլերին:

Նախաքննության ընթացքում տուժողը իրավունք ունի մասնակցելու գործի քննությանը և իր շահերի պաշտպանությունից ելնելով, այս կամ այն կարգի միջնորդություններ հարուցել, որպիսին քննություն կատարող անձը չի կարող հաշվի չառնել: Տուժողը նախաքննության ընթացքում կարող է մասնակցել քննչական մի շարք գործողությունների կատարմանը:

Ցուցմունք տալը ոչ միայն տուժողի իրավունքն է, այլև պարտականությունը: Հաճախ տուժողն ինքն է շահադրգոված լինում ցուցմունք տալու, որպեսզի քննիչի ուշադրությունը բեռնի կարևոր հանգամանքների վրա: Այդ պատճառով, երբ տուժողը ցուցմունք տալու ցանկություն է հայտնում քննիչը, հետաքննություն կատարող օրգանը նրան պետք է անպայման հարցաքննեն:

¹² Տե՛ս Վրացական հանրապետության քր. դատ. օր. 25 հոդ., Ղազախական հանրապետության քր. դատ. օր. 21 հոդ., Կիրգիզական հանրապետության քր. դատ. օր. 27 հոդ.:

¹³ Տե՛ս Երևան քաղաքի Օրչոնիկիձեի շրջանի ժողդատարանի արխիվ, 1964 թ., գործ № 1—12:

¹⁴ Տե՛ս նույն տեղում, 1963 թ., գործ № 1—496:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, Նղիազարյանի նկատմամբ մղած № 1—424, 1963 թ. գործը:

¹⁶ Տե՛ս ՍՍՌՄ գլխավոր դատախազի 16/6—1960 թ. № 3/49 նամակը, որի մեջ պարզաբանվում է դատապաշտպանի և տուժողի նախաքննությանը մասնակցելու որոշ հարցեր:

Ընդ որում տուժողը կարող է ցուցմունք տալ մայրենի լեզվով: Տուժողը իրավունք ունի օգտվելու նաև թարգմանի ծառայություններից:

Տուժողի ցուցմունքի նշանակությունը մեծ է, բայց ամենից առաջ այն արժեքավոր է որպես փաստերի վերաբերյալ հաղորդում և հանցագործության բացահայտման ու ապացույցների ստացման աղբյուր:

Օրինակ, քաղաքացի Ե-ն և մյուսները ՀՍՍՌ քրեական օրենսգրքի 86-րդ և 210-րդ հոդվածներով դատապարտվել են այն բանի համար, որ միլիցիայի համազգեստով, խուզարկություն կատարելու պատրվակով, գիշերը մտել են քաղաքացի Բ-ի բնակարանը և կողոպտել նրա ունեցվածքը: Բնակարանը կողոպտելուց հետո տուժող Բ-ն շրջանի միլիցիայի բաժնին տված հայտարարության մեջ մասնամասն նկարագրել է հանցագործների դեմքի արտաքին նշանները և տուժողի հաղորդման հիման վրա բացահայտվել է հանցագործությունը¹⁷:

Մեր կարծիքով, ճշմարտությունը բացահայտելու առումով անհրաժեշտ է նման քննչական գործողություններին մասնակից դարձնել տուժողին:

Քննչական պրակտիկան վկայում է, որ տուժողը զգալի օգնություն է ցույց տալիս հատկապես դեպքի վայրի զննության ժամանակ: Ծիշտ է ընդգծել Ն. Ն. Կոսոպլեչևը, որ տուժողի մասնակցությունը դեպքի վայրի զննությանը նպատակ է հետապնդում քննիչին օգնություն ցույց տալ այն կատարելու որոշակի սահմաններում¹⁸:

Քննչական մյուս գործողությունների մեջ հատուկ տեղ է գրավում խուզարկությունը: Քանի որ քննչական այդ գործողությունը շոշափում է քաղաքացու իրավունքների որոշ շրջանակ, այն պետք է կատարել խիստ անհրաժեշտ դեպքերում՝ քննիչի պատճառաբանված որոշմամբ, այն էլ դատախազի սանկցիայով¹⁹, խուզարկություն կատարելու հիմք կարող են հանդիսանալ զանազան հաղորդումներ, դիմումներ, այդ թվում և տուժողի դիմում-բացատրությունը: Երբ տուժողը պահանջում է խուզարկություն կատարել, նա պետք է ցույց տա խուզարկության օբյեկտը: Տուժողի միջնորդությունը մերժելու դեպքում՝ քննիչը պարտավոր է կայացնել որոշում այդ մասին, հաղորդելով տուժողին, իսկ վերջինս իրավունք ունի այն գանգատարկել վերադաս դատախազին:

ՀՍՍՌ քրեական դատավարության օրենսգրքը (հոդ. 160) թվարկում է այն անձանց, որոնց մասնակցությունը պարտադիր է խուզարկություն կատարելու ժամանակ: Ինչպես հայտնի է, տուժողը չի դասվում այդ անձանց թվին: Սակայն դա չի նշանակում, որ նա ընդհանրապես չի կարող մասնակցել խուզարկությանը:

Ենթադրվում է, որ տուժողը կարող է մասնակցել խուզարկությանը քննիչի կամ խուզարկություն կատարող այլ անձի թույլտվությամբ, ինչպես դա ուղղակի կերպով լուծված է Ադրբեյջանական (հոդ. 194), Ղազախական (հոդ. 137) հանրապետությունների քրեական դատավարության օրենսգրքերով:

Հանցագործության հետևանքով վնաս կրած անձը պրոցեսում, միաժամանակ, կարող է հանգես գալ նաև որպես քաղաքացիական հայցվոր: Այս դեպքում նա իրավունք ունի քննիչին խնդրելու քաղաքացիական հայցի ապահովման համար միջոցներ ձեռք առնել: Դա բխում է Երենքի պահանջներից: Քննչական օրգանը պարտավոր է միջոցներ ձեռնարկել ներկայացված քաղաքացիական հայցը ապահովելու համար (ՀՍՍՌ քր. դատ. օր. 132 հոդ.), հետևապես քաղաքացիական հայցի ապահովումը քննիչը կարող է կատարել իր նախաձեռնությամբ և տուժողի միջնորդության հիման վրա:

Տուժողը նախաքննության ավարտման պահից սկսած կարող է ծանոթանալ գործի նյութերին (ՀՍՍՌ քր. դատ. օր. 194 հոդ.): Քննիչը պարտավոր է այդ մասին հայտնել տուժողին, կամ նրա ներկայացուցչին ու միաժամանակ բացատրել, որ նա իրավունք ունի ծանոթանալու գործի նյութերին:

Ծանոթանալով գործի նյութերին, տուժողը հնարավորություն է ստանում պարզելու, թե որքանով է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ կատարվել գործի քննությունը, չկա՞ն արդյոք դոր-

17 Տե՛ս Երևան քաղաքի Օրջոնիկիձեի շրջ. ժողդատարանի արխիվ, գործ № 1—476, 1963:

18 Н. Косо плечев, Осмотр места происшествия при расследовании преступлений, связанных с преступлением огнестрельного оружия, Автореферат канд. диссертации, Москва, 1961, стр. 12.

19 Անհետաձգելի գործողությունների դեպքում խուզարկությունը կարող է կատարվել նաև առանց դատախազի սանկցիայի, բայց հետո մեկօրյա ժամկետում դատախազին հաղորդվում է կատարված խուզարկության մասին (ՀՍՍՌ քր. դատ. օր. 159 հ.):

ծում թերություններ և հակասություններ, միջոցներ ձեռք առնվել են քաղաքացիական հայցի ապահովման համար: Գործին ծանոթանալուց հետո, տուժողը իր դիտողությունները քննիչին հայտնում է միջնորդության ձևով, որը քննության է առնվում: Արված միջնորդությունը հիմնավորված լինելու դեպքում այն բավարարվում է, իսկ մերժելիս կայացվում պատճառաբանված որոշում:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քննչական օրգանի կողմից բոլոր դեպքերում չէ, որ տուժողի համար հնարավորություն է ստեղծվում նախաքննության ավարտումից հետո ծանոթանալու գործի նյութերին: Առանձին գործերի վերլուծությունը ցույց է տվել, որ քննչական օրգանը օրենքի այդ պահանջը երբեմն կատարում է ձևականորեն, հաճախ տուժողին այդ իրավունքը բացատրում է ոչ թե քննության ավարտումից հետո, այլ ավելի շուտ, երբ քննիչը որոշման համաձայն անձին ճանաչում է տուժող:

Գործի նյութերին ծանոթանալու տուժողի իրավունքը ծագում է նախաքննության ավարտման պահից. եթե գործով նախաքննություն չի կատարվել և գործի քննությունը վերջացել է հետաքննությամբ, ապա հետաքննությունը ավարտելիս տուժողին չի ծանոթացվում գործի նյութերին, այլ քննիչը նրան հայտնում է քննության ավարտման և գործը դատախազին ներկայացնելու մասին (ՀՍՍՌ քր. դատ. օր. 109 հոդ.):

Տուժողի իրավունքների նման սահմանափակումը, մեր կարծիքով, ոչնչով չի պատճառաբանված. ենթադրվում է, որ տուժողին հետաքննական գործերով պետք է տրվի նույն պրոցեսուալ իրավունքները, ինչպիսին ունի նախաքննության ստադիայում: Դատական պրակտիկան ցույց է տվել, որ երբ տուժողը հետաքննության ստադիայում զրկված է լինում պրոցեսուալ այդ իրավունքից, շանթախալով գործի նյութերին, հաճախ ոչ ցանկալի հետևանքներ են առաջացնում: Մի շարք միջնորդություններ, որպիսին նա կարող էր հարուցել գործի քննության ընթացքում, հարուցվում են դատաքննության ժամանակ, որոնց բավարարումը երբեմն հնարավոր չի լինում առանց տվյալ գործը լրացուցիչ քննության վերադարձնելու²⁰:

ՍՍՌ Միության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքները տուժողին տվեցին լայն իրավունքներ նաև դատաքննության ընթացքում, օրինակ, ներկա գտնվել նիստերին, բացարկ հայտնել դատարանի կազմի դեմ (ՀՍՍՌ քր. դատ. օր. 261 հոդ.), իր կարծիքը հայտնել գործի դատաքննությունը սկսելու հնարավորության մասին (ՀՍՍՌ քր. դատ. օր. 262 հոդ.), դատաքննության ժամանակ միջնորդություններ հարուցել (ՀՍՍՌ քր. դատ. օր. 266 հոդ.), իր նկատառումները հայտնել դատաքննության մասնակիցների կողմից արված միջնորդությունների, դատաքննության ընթացքում առաջացած հարցերի նկատմամբ, հարցեր տալ ամրաստանյալին, վկաներին, փորձագետներին (ՀՍՍՌ քր. դատ. օր. 269 հոդ., 272 հ., 279 հոդ.):

Տուժողը դատաքննության ժամանակ նույնպես կարող է մասնակցել տեղադնությունը, իրեղևն ապացույցների, փաստաթղթերի, տեղանքի և շենքի զննմանը (ՀՍՍՌ քր. դատ. օր. 282, 281, 283 հոդ. հոդ.), մասնակցելու դատական վիճարանությանը, օրենքով նախատեսված դեպքերում, մասնավոր մեղադրանքի գործերով, իսկ այն դեպքերում, երբ տուժողը միաժամանակ քաղաքացիական հայցվոր է, դատաքննության ժամանակ ունենալ իր ներկայացուցիչը:

Հիմունքների 27 հոդվածը դատարանին պարտավորեցնում է տուժողին բացատրել դատաքննության ժամանակ նրան տրված իրավունքները և ապահովել դրանց կատարումը:

Հիմունքները տուժողի համար՝ դատավճռի գանգատարկման հարցում որևէ սահմանափակում չի մտցրել (հոդ. 24 և 44):

Տուժողը իրավունք ունի գանգատարկելու դատավճիռը բոլոր հիմունքներով, այդ թվում և արդարացի ման դատավճիռը, իսկ քաղաքացիական հայցվորը իրավունք ունի գանգատարկելու դատավճռի միայն քաղաքացիական հայցին վերաբերող մասը (հիմունքներ 44 հոդ.): Այն դեպքերում, երբ հայցվորը գտնում է, որ արդարացի ման դատավճիռն, ըստ էության, ճիշտ չէ, ապա կարող է դիմել համապատասխան օրգաններին, խնդրելով բողոքարկել արդարացի ման դատավճիռը:

Մինչև ՍՍՌ Միության և միութենական հանրապետությունների քրեական դատավարության հիմունքների (1958 թ.) ընդունումը հանրային մեղադրանքի գործերով տուժողը դատավճիռը գանգատարկելու իրավունք չուներ, իսկ այն դեպքերում, երբ պրոցեսում նա հանգես էր դալիս որ-

²⁰ См. Строгович, Развитие законодательства о судоустройстве, «Советская юстиция», 1961, № 22, стр. 5—6. Р. Д. Рахунов, Демократические основы советского правосудия будут развиваться, «Социалистическая законность», 1961, № 12.

պես քաղաքացիական հայցվոր, նրան իրավունք էր տրվում զանգատարկելու դատավճռի միայն քաղաքացիական մասը: Քրեական դատավարության հիմունքները (1958 թ.) ընդլայնելով տուժողի պրոցեսուալ իրավունքները, նրան բոլոր գործերով, այդ թվում և հանրային մեղադրանքի գործերով, տվել են դատավճիռը զանգատարկելու իրավունք: Այսպիսով, Հիմունքները տուժողին դարձնում են քրեական դատավարության ակտիվ մասնակից ոչ միայն նախաքննության ու դատաքննության ժամանակ, այլև բեկման վարույթում:

Տուժողը բեկման ատյանում իրավունք ունի.

1. ծանոթանալ դատավարության մյուս մասնակիցների և դատախազի կողմից բերված բողոքարկումների, զանգատների հետ և այդ առթիվ ներկայացնելու իր առարկությունները:

2. բեկման ատյանում ներկայացնելու լրացուցիչ նյութեր:

3. մասնակցելու բեկման ատյանում դատական նիստին:

Տուժողի իրավունքը դատավճռի զանգատարկման մասում իր ամրապնդումն է գտել քրեական դատավարության հիմունքների 24 և 44 հոդվածներում:

Օրենքում տուժողի համար որևէ սահմանափակում չի նախատեսված օրինական ուժի մեջ մտած դատավճռի զանգատարկման հարցում: Տուժողը իր խախտված իրավունքները պաշտպանելու նպատակով կարող է սահմանված ժամկետում զանգատարկել ինչպես մեղադրական, այնպես էլ արդարացնող դատավճիռը թե՛ մասնավոր, թե՛ մասնավոր-հանրային, և թե՛ հանրային մեղադրանքի գործերով: Այսպիսի իրավունք նա նախկին քրեական օրենսդրությամբ չուներ:

Այսպիսով, քրեական դատավարությունում տուժողի դատավարության իրավունքների ընդլայնումը ռեալ պայմաններ ստեղծեց պաշտպանելու հանցագործությունից տուժած անձի իրավունքները և օրինական շահերը, օգնելու դատաքննչական օրգաններին հանցագործության բացահայտման և օրյեկտիվ ճշմարտությունը պարզելու գործում և դրանով իսկ կատարելու այն կարևոր խնդիրը, որը դրված է քրեական դատավարության առջև, հանցագործության դեմ տարվող պայքարի բնագավառում:

Г. А. МАТЕВОСЯН

ДЕМОКРАТИЗМ СОВЕТСКОГО УГОЛОВНОГО ПРОЦЕССА И ЗАЩИТА ПРАВ ПОТЕРПЕВШЕГО

Р е з ю м е

Охрана гарантированных прав и интересов граждан всегда являлась предметом особой заботы Коммунистической партии и Советского правительства. В нашем обществе человек и его потребности были и остаются в центре внимания. Защита прав советских граждан нашла свое законодательное закрепление в Конституции СССР, которая не только провозглашает права граждан, но и предусматривает необходимые гарантии для их осуществления.

В системе правовых гарантий охраны прав и законных интересов советских граждан важное место занимают процессуальные гарантии прав личности в уголовном судопроизводстве, особенно те, которые устанавливаются непосредственно для потерпевшего и обвиняемого. Защита прав и интересов граждан нашла свое непосредственное отражение в советском уголовно-процессуальном законодательстве. Основы уголовного судопроизводства Союза ССР и союзных республик (1958 г.) признали потерпевшего субъектом уголовного процесса, предоставив ему широкие права для защиты своих прав и законных интересов.

«Основы» принципиально по новому решают вопрос о положении потерпевшего в уголовном судопроизводстве, представляют лицам, пострадавшим в результате преступления, права активного участника процесса, имеющего необходимые процессуальные возможности самостоятельно отстаивать свои интересы в уголовном процессе.

Основы уголовного судопроизводства Союза ССР и союзных республик значительно расширили права потерпевшего как в стадии предварительного следствия, так и судебного разбирательства.

Участие потерпевшего в предварительном следствии и в судебном разбирательстве помогает суду проводить судебное разбирательство полно и всесторонне. Охрана прав и законных интересов лиц, пострадавших от преступления, является важнейшей задачей следственных, прокурорских и судебных органов. Эта задача неразрывно связана с общей задачей охраны прав граждан и укреплением социалистической законности в нашей стране.